ՊՐՈՖԵՍՈՐ ԷԴԻԿ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԸ

2014 թ. մայիսի 5-ին լրացավ վաստակաշատ գիտնական, միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հիմնադիր դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Արտեմի Զոհրաբյանի ծննդյան 75-ամյակը: Այդ առիթով ԵՊՀ Պալյանների անվան դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որը նախագահում էին ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանը:

Նիստին մասնակցում էին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից անդամ Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի բազմաթիվ ներկայացուցիչներ, ուսանողներ:

«Էդիկ Զոհրաբյանը ոչ միայն իսկական համալսարանական էր, անվանի գիտնական և փայլուն պատմաբան, այլև միշտ օգնող, սատարող, ուսակից և միաժամանակ ոչ սովորական անձնավորություն: Նա առանձնանում էր տղամարդու կեցվածքով, պրոֆեսիոնալիզմով և սկզբունքայնությամբ: Նա շատ դժվարություններ է ունեցել կյանքում, սակայն երբեք չի հանձնվել, համալսարան է մտել գլուխը բարձր, վստահ: Եվ չնայած վերջին տարիներին վրա հասած հիվանդությանը՝ գլուխը բարձր էլ հեռացավ մեզանից՝ եկող սերնդին թողնելով գիտական մնայուն ժառանգություն», - հանդիսավոր նիստի բացման խոսքում ասաց ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան Գեղամ Պետրոսյանը հանգամանալից ներկայացրեց պրոֆեսոր Էդիկ Զոհրաբյանի գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունն ու թողած գիտական արժեքավոր ժառանգությունը. «Անուրանալի է պրոֆ. Էդիկ Զոհրաբյանի ավանդը համալսարանական կրթության կազմակերպման ու զարգացման գործում: Հիմնադրելով ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետը՝ նա նաև հիմնադիրը եղավ հայ միջազգայնագիտական նոր դպրոցի: Պրոֆեսորի պատրաստած կադրերն այսօր լուրջ գոր-

ծունեություն են ծավալում ինչպես կրթության ու գիտության, այնպես էլ միջազգային հարաբերությունների, դիվանագիտության պրակտիկ ոլորտներում: Նա սիրված ու հարգված ընկեր, գործընկեր ու դասախոս էր», - այսպես եզրափակեց իր խոսքը պրոֆ. Գ. Պետրոսյանը:

Անվանի գիտնականի մասին իրենց հուշերն ու ակնածանքի խոսքն ասացին նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Էդիկ Մինասյանը, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, պրոֆ. Հրաչիկ Միրզոյանը, ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ, պրոֆ. Սամվել Մուրադյանը:

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանն իր ելույթում ի մասնավորի շեշտեց, որ ի դեմս Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի՝ մեծ է ԵՊՀ-ի դերը ՀՀ դիվանագիտության ոլորտի կայացման գործում. «Պետք է նշեմ,- ասաց նա,- որ այսօր թե՛ արտերկրում, թե՛ Արտաքին գործերի նախարարության աշխատակազմում մեծ թիվ են կազմում պրոֆ. Էդիկ Զոհրաբյանի սաներն ու ընդհանրապես համալսարանականները, որոնք աչքի են ընկնում ոչ միայն մասնագիտական, այլև ակադեմիական փայլուն գիտելիքներով»:

Հանդիսավոր նիստի ավարտին ի կատարումն ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտխորհրդի ապրիլի 9-ի որոշման տեղի ունեցավ վաստակաշատ գիտնական, պրոֆ. Էդիկ Զոհրաբյանի անունը կրող թիվ 412 լսարանի բացումը, որը ներկաների կողմից ընդունվեց սիրով ու ծափահարությամբ:

Խմբագրական
խորհուրդ